

քանի՜ տարուան մէջ պիտի կատարէ: Վերջինս շատ դիւրաւ կը գտնուի, եթէ 166 ինքն իրով բազմապատկենք և հլած արտադրելը 166ով նորէն բազմապատկենք կ'ունենանք 4574296. և եթէ այս թուոյս արմատը հանենք՝ կ'ունենանք զթիւ 2138,5, և այս թիւս կը նշանակէ թէ յետ երկուհազար հարիւր երեսուն ութ ու կէս տարիներու մէջ ամբողջ շրջան մը կատարած պիտի ըլլայ:

Գալով այն հեռաւորութեան վրայ զետնուող մարմնոյն տրամագծին շատ դժուար պիտի չըլլայ հաշուել: Ենթադրելով որ ըլլայ Լուսնի թափաքի արբանեկի համեմատութեամբ, կրնանք գտնել տրամագիծն այս անձանթ Արևու մոլորակին, հետեւել բաղդատութիւնն ընելով:

Եթէ թ. արբանեակն Լուսնի թափաքի 24 չափ. արամագիծ ունի, ըստ ներկայ չափուց, Արևն որ քան զԼուսնի թափաքն 1068 անգամ աւելի զանգուած ունի, այնչափ անգամ մեծ մարմնոյն վրայ կրնայ իշխել արդ 24 · 1068 = 25632 չափ. ըսել է թէ Արևը ի կարողութեան է զսպել՝ Երկրիս կրկին տրամագիծ ունեցող մոլորակ մը և այն 166 անգամ Երկրարև հեռաւորութենէն. և այս մոլորակս տեսանելի պիտի ըլլայ 0", 214 անկեամբ: Բայց այսպիսի մոլորակ մը ներկայ որ և է գործիով կարելի չէ տեսնել, եթէ ոչ մեր գործիները թափանցողական ուժ մ'առնուն տասնապատիկ հարիւրապատիկ աւելի քան մեր ամենագորաւոր տեսաբանական գործիներ:

Բայց որքան որ սահմանեցինք թէ Արևուն ազդեցութիւնը կը հասնի մինչև 166 անգամ Երկրարև հեռաւորութեան վրայ ասով չեմ ուզեր սահմանափակել Արևու ազդեցութիւնը իբրեւ թէ չանցնի անդը քան նշանակեալ թիւը. վասն զի եթէ երկրիս և Լուսնի հեռաւորութեան հետ բաղդատենք, փոխանակ գտնելու 166 Երկրարև հեռաւորութեան՝ պիտի գտնենք 848 անգամ Երկրարև հեռաւորութեան վրայ պիտի բռնէ Արևը մոլորակ մը որ իր քառորդ տրամագիծ մ'ունենայ ինչպէս է Լուսինը

գերի եղած Երկրէս: Եթէ կարելի ըլլար հեռանալ շատ, զոր օրինակ Հայկի Հոիգել աստղէն դիտել, Արևը պիտի տեսնէինք և շատ զօրաւոր դիտակներով՝ քովէ քով երկու աստղներ որոց մին միւսին վրայ կը շրջի իբր կրկնաստղ մը. իսկ Լուսնի թափաք Գոսիդոն Ուրանոս Արևու ճառագայթներու մէջ պիտի կորսուէին. իսկ Երկրիս զոյու-թեան վրայ և ոչ մի ամենամեծաւոր աստղներու բնակիչներուն երեակայու-թեան մէջ կրնայ մտնել, իսկ մարդս հիւլէ հիւլէի վրայ կը ձգտի բարձրանալ քննել անոնք որ իր գլխոյն վերև կը գտնուին և ամփոփել տիեզերքը հիւլէական ըղեղին մէջ և կը փափաքի հասու ըլլալ բոլոր տիեզերական օրինաց. անհ հիւլէ որ տիեզերք մը կ'արժէ:

Հ. ԽՈՐԷՍ ՍԻՆԱՍ

ԱՆՁԲԵՆՈՑ ՕՐ

Միօրինակ կ'իջնեն շիթերն անձրևի՝

Մարգին վերայ ծաղկաթոյր.

Ո՛վ ողողում համբոյրի:

Լեռներն հեռուն շոգիամէջն է ծածկեր,

Ձիւն – սարն իրենց երկնի գեմ

Աղերսանքով է ցըցուեր:

Առուն է ցուրտ. կ'անցնի քամին ֆըշալով

Ու ծաղիկներ դիւրաթեք

Կը հաքընեն զողալով.

Ինչո՞ւ քամին կը սուլէ, ցուրտ է, ինչո՞ւ

Ըսէ՞ք աստղեր մըտախոհ

Գաղտնիքըն այս ամպաշու...:

Հ. Ա. ՏԵՈՒԷՆ

